ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև 2001-2010 թվականների տնտեսական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ուկրաինան, այսուհետ՝ Բարձր պայմանավորվող կողմեր,

ղեկավարվելով 1996 թվականի ապրիլի 14-ի՝ Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև բարեկամության և համագործակցության մասին Պայմանագրով,

ելնելով իրավահավասար ու փոխշահավետ առևտրատնտեսական և արտադրական հարաբերությունների հետագա ամրապնդման ու զարգացման, դրանց երկարաժամկետ և կայուն բնույթ հաղորդելու, երկու պետությունների տնտեսական ու գիտատեխնիկական ներուժի արդյունավետ օգտագործման և իրենց ժողովուրդների բարեկեցության բարձրացման անհրաժեշտությունից,

կարևոր նշանակություն տալով տնտեսական բարեփոխումների իրականացման ներդաշնակեցմանը, ապրանքների, ծառայությունների, կապիտալների և աշխատուժի ազատ տեղաշարժի փուլային անցման համար պայմանների ստեղծմանը,

հաշվի առնելով Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում պայմանավորվածությունների հիման վրա փոխգործակցությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Բարձր պայմանավորվող կողմերը իրականացնում են Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև Երկարաժամկետ տնտեսական համագործակցության 2001-2010 թվականների միջպետական ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր), որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Հոդված 2

Բարձր պայմանավորվող կողմերի տնտեսական համագործակցությունն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից և ենթակայությունից) միջև փոխգործակցության միջոցով՝ պահպանելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը և ազգային օրենսդրությունը:

Բարձր պայմանավորվող կողմերը, նշելով ընդհանուր տնտեսական տարածքի փուլային ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը, բարենպաստ պայմաններ կստեղծեն սոցիալ-տնտեսական վերափոխումների, կառուցվածքային վերակառուցման հիմնական ուղղությունների համաձայնեցման, արտաքին տնտեսական գործունեության, մաքսասակագնային

և հարկային քաղաքականության, հակամենաշնորհային կարգավորման ոլորտում նորմատիվ-իրավական բազայի մերձեցման, առանձին նախագծերի ու ծրագրերի ձևավորման, կոոպերացիայի զարգացմանն աջակցելու, համատեղ արտադրական կառուցվածքների ստեղծման, մասնավորեցման, ներդրումային ծրագրերում փոխադարձ մասնակցության համար ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ուկրաինայի նախարարների կաբինետը համակարգում են Ծրագրի կատարումը, փուլային վերահսկողություն են իրականացնում դրա իրագործման նկատմամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտումներ են կատարում դրանում:

Հոդված 4

Ծրագրի կատարման ընթացքը առնվազն տարին մեկ անգամ կքննարկվի բարձր մակարդակով:

Հոդված 5

Սույն Պայմանագրի դրույթների մեկնաբանման և կիրառման կապակցությամբ վեճերը և տարաձայնությունները ենթակա են կարգավորման խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 6

Սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն սույն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Պայմանագրի 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հոդված 7

Սույն Պայմանագրի դրույթների կատարումը չի շոշափում Բարձր պայմանավորվող կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերից բխող իրավունքները և պարտականությունները:

Հոդված 8

Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Բարձր պայմանավորվող կողմերի կողմից Պայմանագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարումը հաստատող վերջին գրավոր ծանուցումը ստանալու պահից և գործում է մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը:

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Պայմանագրի գործողությունը մյուս Բարձր պայմանավորվող կողմին գրավոր ծանուցելու միջոցով: Այդ դեպքում Պայմանագրի գործողությունը դադարեցվում է նման ծանուցում ստանալու պահից 6 (վեց) ամիս հետո:

Սույն Պայմանագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Ծրագրին համապատասխան իրագործվող նախագծերի իրականացմանը:

Կատարված է Կիև քաղաքում 2001 թվականի մարտի 1-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս կգերակայի ռուսերեն տեքստը:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի մարտի 14-ից: